

# Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ա Ր Չ Ա Գ Ա Ն Գ

\* ԿՈՄՍՈՒՆԱՐԻՍ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅ ԿԱՐՄՈՐ ԽՆԵՒ. —  
 Մարտ 26-ին Մ. Ռ. վարժարանը շքեղ հանդէս  
 մը սարքեց ի նպաստ Հ. Կ. Խաչին՝ Կիբեղեան  
 պեճո՞ դահլիճին մէջ, որուն ենրկայ եղան վե-  
 նետկոյ պաշտօնական անձնատրուութիւնք և քա-  
 ղաքին ազնուական դասը Առաջերսաց այդ յոյժ  
 ծափահարելի յաջողակութիւնը ստուգիւ վկա-  
 յոց, որ մինչ ցոյց կու տային անուք իրենց  
 փայլուն ընդունակութիւնը՝ ուժգին կը զգային  
 նոյն ատին սրտերնուն խորը հայ տառապանքն  
 ու ցարկը, որոնց վերուժումը կարծես կ'ը-  
 նէին, ժերթ խառնելով անոնց մէջ ազատութեան  
 մը յոյսն ու հաւատքը:

Առաջին կարգերուն մէջ կը բազմէին վենետ-  
 կոյ Կրօնական, Գաղղիոյ և Անգղիոյ Հիւպա-  
 տոսները, Միաբանութեանս Աթոռակալ Վ. Ը.,  
 Banca Commerciale-ի և Նամակատան վարիչ-  
 ները, Իտ. կարմիր Խաչի ֆոխ-Նախագահը,  
 Ռուսոցապետներ և ուրիշ պաշտօնական ան-  
 ձինք:

Վարժարանիս նախկին աշակերտներէն Տօթթ.  
 Մանուկ Խանպէկեան՝ ընտիր ու վառ գոյներով  
 նկարագրեց Հայոց ողիտականը և ցուցադրեց  
 հաւաքումին նպատակը: Ապա սկսաւ ի գործ  
 դրուիլ նուագահանդէսին ճոխ և ընտիր ծրա-  
 գիրը՝ առաջնորդութեամբ մահալլո Ponzila-  
 qua-յի, որուն մէկ ի որ երկը՝ վկայ մը «Sulle  
 rive dell'Arax» առաջին անգամ ներկայացուե-  
 ցաւ ու խեց երկարատե ծափեր: Վենետկեան  
 լրագիրները զովեստի և գնահատանքի տողեր  
 նուիրեցին կտրիճ նուագախումբին, որ այնքան  
 ցայտուն գեղեցիկ յատկութիւններ ցուցուց:

Առաջին մասէն վերջ վարժարանին տեսուչը  
 Հ. Գարբ. Վ. Նահապետեան արտասանեց ճառ  
 մը, ու շօշափեց անցողակի Հայ ազգին պատ-  
 մութիւնը, անոր յարաբերութիւնները Հռովմայ  
 հետ՝ կետարներու ժամանակ, անոր մասնակցու-  
 թիւնը թաշակրաց հետ և ապա Մեծին Միթիթա-  
 բայ լուսամտի ու մարդասիրական ձեռնարկնե-  
 րը: Սիրալիր խօսք մ'ալ ուղղեց վենետկոյ որ  
 հայ փախտականներն հիւրընկալեց: Վերջացուց  
 ճառը՝ մաղթելով որ Արքիականի թագուհին  
 կարենայ մտրիկ ապագային ներկայ ըլլալ Հայաս-  
 տանի փառաւորութեան, երբ սա՛ ինչպէս իտա-  
 լիա՛ ընդունի իր որդիները այն սահմաններուն  
 մէջ՝ զոր բնութիւնը իրեն տուած է: Խանդավառ  
 ծափեր անդիմաքի արտայայտութիւն մը դար-  
 ձան հաղիւթականաց կողմանէ: Յետոյ ամենա-  
 հայ քաղաքացիականաց կողմանէ: Մեծոյ ամենա-  
 քաղցր սպաւորութեան տակ մեծոյն ուրախակ-  
 ցութիւն յայտնեցին ու զովեստ տունին վարդա-

պեաներուն՝ այդ քաջ և ուսումնասէր աշու-  
 կերտներուն համար:

Յոյն Նուագահանդէսէն գոյացաւ 1214 զուտ  
 իտ. լիբա:

\* ՀԱՅ ՍԵՆՆ ՍԻ ՀԱՅ ԵՆՈՐՐԸ ԵԿԵՂ. ԹԱՌՈՐԻ ՄԸ  
 ՄԵՋ. — Ապրիլ 23-ի Նոր կիրակիին՝ վենետ-  
 կոյ «Salute» եկեղեցոյն մէջ կատարուեցան  
 եռօրեայ մը ֆակման հանդէսները, հանգուցեալ  
 Բենեդ. Ժե. Պապի կողմանէ սոյն եկեղեցոյն  
 «պաղիլիս» անուանումին և Աստուածածնայ  
 պատկերին թագադրութեան առթիւ: Միջօրէէ  
 վերջ տեղի ունեցաւ շքեղ թափոր մը, որուն կը  
 մաս՝ ակցէին 10-էն աւելի եպիսկոպոսներ և 14  
 Ծոնդէն Նրք. Պատրիարքը՝ նաև իբր ՔՏՆԱՅԱԿԷ.  
 Ներկայացուցին: Թափորին մասնակցեցաւ Ուել-  
 տիս Աթոռակալ Վ. Ը և վանական աշակերտք  
 եկեղեցական շքեղ տարազներով: Հոն՝ Մ. Ռ.  
 վրժին-ի Եեփորախումբն ալ պաշտական բա-  
 ժին մը տասնանց Ս. Մարկոսի երգչիչներուն  
 հետ, նուագելով Ponzilacqua-յի մէկ նոր Լի-  
 թանիայն:

\* ՄԵՌՈՐ ԱՐԱՐԱՐ ՄԱՆՈՒՆ ՏԱՐԵՄԱՐԸ. —  
 Մեծ հանդէսով կատարուեցաւ Մայրավանքիս  
 մէջ Հիմնադրիս նուիրելի օրը, Մայիս 2-ին:  
 Տեղի ունեցաւ ակադեմիական հանդէսը ըստ սո-  
 վորութեան՝ Գրատան մէջ. բացի վանականնե-  
 ը՛ն՝ ներկայ էին մի քանի ազգային ղէմբեր և  
 Մ. Ռ. վրժին-ի վարչութիւնն ու աշակերտք:  
 Օրուան ճառասուր Շ. Գ. Ոսկեան, զբարար  
 ներբողեան մ'ըբաւ Հիմնադրին վրայ: Հ. Ա. Ղա-  
 զիկեան զբարբ քերթուած մը լսեցուց «Առ  
 Ոգին Միթիթարայ», երկու վանական աշակերտ-  
 ներ ալ մէջմէկ ոտանաւոր արտասանեցին: Իսկ  
 Մ. Ռ. վարժարանին Յ. Թաշեան՝ յանուն իւր  
 ընկերներուն կարգաց աշխարհաբար ոտանաւոր  
 մը: Գլխաւոր զեր մ'ալ դարձեալ ունեցաւ Մ.  
 Ռ. Վ. Ի Եեփորախումբը, հնչեցնելով միջանկեալ  
 գեղեցիկ կտորներ, յորս նորութիւն էր կառա-  
 վարչին՝ Ponzilacqua-յի հեղինակած Inno  
 «Mechitar»-ը: Յետ «Չարրիտ աշխարհ» խմբեր-  
 գին՝ զոր երկու ձայնով նուագեցին վանքիս ա-  
 շակերտք գեղեցիկ և իմաստալից խօսքերով փա-  
 կուռն ըբաւ հանդէսիս Վ. Հ. Յովհաննէս Աթո-  
 ռակալ վարդապետ:

1. Այժմ Բժշկական ներքին Հիւանդութեանց և Օր-  
 ձական վերաբերյալ Ազգային Հիւանդանոցին մէջ, և  
 Բժիշկ. Մեթոճեանի, Մարտ 23-ին Արւոյի մէջ ըբա՞  
 էր նաև ճառասուրթիւն մը հետեանալ տիպարով: «Al-  
 cooliamo e Tuberculosis»